ԲՐԵԴԵՐԻԿՈՍ Բ.

Բրեդ. Գուլիէլմոս թագաւորական իշխան էր դեռ Բրուսիոյ՝ երբոր Մարիամ Տորոթէա իր ամուսինը ծնաւ 1712ին յունուարի 24ին, զկարոլոս Բրեդ. որ ետքը Բրեդերիկոս Բ. կոչուեցաւ ուստի չափ անուանի եղաւ։ Տանուիրեալ ամիսէն և թագաւորը որ պապն էր մեռաւ։

Այն ժամանակ Պերլին շատ օտարազգի ուսումնականներ կային, թէպէտ և Բրեդ. Գուլիէլմոս սաստիկ դէմ էր ճոխութեան, գեղարուեստից օտար ազգաց, և մանաւանդ Գաղղիոյ նորելուքներուն։ Բայց հոն եկողներուն մեծ մասը Բրեդերիկոս Առաջնոյն ստիպողական հրաւէրքներուն զիջանելով եկած էին, վասն զի ինքը Բրեդերիկոս Ա. մեծապէս ջանք ունէր որ թագաւորութիւնը պայծառացնէ ուսմամբ և գիտութեամբ. մէկ մասն ալ Գաղղիացի ուսումնական փախստականներ էին որ Բրուսիա ապաւիներ էին։

Այս վերջիններէն շատերը դաստիարակ եղան Կարոլոս Բրեդերիկոսին. նախ առաջին տիւ Վալ տը Բոքուլ տիկինը դայեակն եղաւ։ Այս մեծարգիւն խաթունը նոյն պաշտօնը կատարէր էր նաև Բրեդ. Գուլիէլմոսի վրայ ալ՝ բայց դրժբաղդաբար չէր յաջողած. այն ատեն երբ Բրեդերիկոս Ա. կը ջանար Սբրէի ափանցը վրայ նոր Վերսայլ մ՝ ալ ինքը կառուցանելու։ Բոքուլ տիկինը մատաղ համբակին սրտին մէջ Գաղղիոյ գլուխ գործոց սեպուած բաներուն վրայ սաստիկ սէր ձգել տուաւ։ Բրեդերիկոս անկեղծ երախտագիտութեամբ կը սիրէր զինքը. ամէն շաբաթ կ՝երթար իրիկուն մը քովը կ՝անցընէր ընտրած ուսումնական անձինքներուն հետ մէկտեղ, որոնք գրեթէ ամէնքն ալ գաղղիացի էին. այս սովորութիւնը թագաւորութեան ժամանակն ալ նոյնպէս պահեց ինչուան 1741 Բոքուլ խաթունին մահուան տարին։

Եօթը տարուան՝ դաստիարակ ունեցաւ Ալպերդոս Քոնրատ տը Ֆինքէնշդայն կոմսը և դասատու Ցիւ Հան գաղղիացին՝ որ քիչ մը ժամանակ Բրուսացի բանակին մէջ մնած էր. Ցիւ Հան հակաճառութիւն շատ կը սիրէր, և իրմէ տպաւորուեցաւ՝կ՝ըսեն շատերը, Բրիդերիկոսի վրայ ալ սկեպտիկեան և հակառակութեան ոգին. բայց ուրիշ կողմանէ Ցիւ Հան խոհական, հանճարեղ ուգիտուն մարդ էր, անանկ որ Բրեդերիկոս իրմէ ստացաւ բոլոր մատենագրական տեղեկութիւնը։ Ազբունեաց քարոզիչն ալ կրօնական մասին վարժապետն էր, բայց դժբաղդաբար չյաջողեցաւ. իսկ ուսումնական մասը՝ բերդ կազմելու և բանակ յարդարելու բաժանմունքներուն հանդերձ սորվեցաւ երևելի զինուորական ճարտարապետ մը։ Զինուորական հրահանգաց համար ալ ութը տարուընէ սկսեալ ազնուական զինուորաց գնդին քանզէլանուամբ մէկը վարժապետ ունեցաւ, հանդերձ զինանոցով մը յորում իրեն ուժոյն համեմատ չինուած ամէն տեսակ զէնք կար. վասն զի հայրը Գուլիէլմոս քան զամենայն ինչ կարևորագոյն կը սեպէր այս կրթութիւնը. անոր համար ալ քիչ ատենէն ազնուականաց գնդին գլխաւորն ըրաւ զինքը։ Ամէն օր Բրեդերիկոս պզտիկ զինուորներուն կրկնել կուտար թագաւորին հսկայից գնդին ընել տրուած փորձերը, և նաև ըստ կանոնի իր գնդին գլուխն անցած կը հաղորդուէր. վասն զի հայրը հաւասարապէս վրէժխընդիր էր թէ կրօնական և թէ զինուորական կանոնաց, և ինչպէս յայտնի է, ատեն մը խղճահարութեան պարնելով սեւամաղձէ բռնուեցաւ և ինչուան ուզեց աթոռէն ալ հրաժարիլ։

Մանկութեան հասակէն Բրեդերիկոս սաստիկ խնայողութեան սկսաւ վարժիլ։ Թագաւորը տարին բովանդակ մանր ծախուցը համար 360 ֆլորէնի կուտար, որ կամաց կամաց շատցուց 600 ըրաւ. և թէպէտ ոչ երբէք ամբողջ սրտին գումարը իրեն ձեռքը կը տրուէր, այնու հանդերձ պարտաւորեալ էր մանրամասնաբար հաշիւ տալու երկու դաս-

տիարակացը. իսկ տարեգլխին հայրը կը գովէր զինքը եթէ դումարէն մաս մ՚աւելցուցած ըլլար։

Մանաւորապէս մարմնոյ կրթանքի վարժեցնելու համար շատ խնամք տարուեցաւ վրան, որուն արդէն կարդէ դուրս յաջողակութիւն ունէր, իսկ ուսմանց նկատմամբ նոյն խնամքը չեղաւ, բայց Տիւ Հանէն սորվեցաւ պատմութիւն, փիլիսոփայութիւն, դաղղիարէն մատենագրութիւն, և ուրիշէ մ՚աղուսուցիչական մասին և պատերազմական արուեստին մէջ աղէկ զարգացաւ. և այս դաստիարակացը վրայ նոյնպէս ան աստիճան սէր կապեց Բրեդերիկոս որ ուսմունքը լմնցնելէն վերջն ալ չուզեց բաժնուիլ իրենցմէ, այլ ինչուան վերջը արքունիքը պահեց։

Պատանեկութենէն սկսեալ երգիծաբանութիւն ընել շատ կ՚ախորժէր, և կապիկներու խումբ մը՝ որոնց վրայ մեծ սէր ունէր՝ գործիք ըրած էր իրեն այս բանիս մէջ։ Կապիկներն ամէնն ալ առանձին առանձին անուններ ունէին. զոր օրինակ մէկը ատենադպիր էր, միւսը սենեկապան, ուրիշ մը ներքին խորհրդական, և այլն. և շատ անգամ ծիծաղելով կ՚ըսէր թէ «Այս պարոնները մեծ հօրս Բրեդերիկոսի Առաջնոյն պալատականները կը ներկայացնեն ինծի»։ Օր մ՚ալ որ խորամանկ պալատականներէն մէկը կը փնտռէր՝ նախասենեկին դուռը բացաւ ու սկսաւ պոռալ. «Պարոն խորհրդական, Պ. խորհրդական, ուր ես». հոն դիպուածով հօրը ծանրագլուխ խորհրդականներէն մէկը դուրսը կը սպասէր. կարծելով թէ զինքը կը կանչէ՝ վազեց մէկէն առջևը ելաւ ու խոնարհաբար բարևեց զինքը։ Բրեդերիկոս բարձրաձայն ծիծաղելով «Ձ.քեզ չկանչեցի, ըսաւ խորհրդականին՝ որ շրփոթեր ու այլայլեր էր, այլ իմ կապիկս. բայց նոյն բանն է, եկուր»։

Բրեդերիկոս վայելչադէմ, ոգելից, սիրելի եւ հասակէն շատ վեր հանճարեղ ըլլալով՝ հօրը շատ սիրելի պէտք էր ըլլալ, բայց ընդ հակառակն Գուլիէլմոս միշտ ատելութիւն մ՚ունէր որդւոյն դէմ որ հետզհետէ ալ սաստկացուց՝ ինչպէս պիտի տեսնենք։

Մեծն Պետրոսի Ռուսաց թագաւորին պալատականներովն հանդերձ Պերլին այցելութեան գալէն քիչ վերջը մեծ վտանգէ մը ազատեցաւ Բրեդերիկոսի կեանքը։

Բրեդ. Գուլիէլմոս դեռ թագաւորական իշխան եղած ժամանակէն բարեկամ էր Անհալդ–Ցերսոյ իշխանին և Կրէոմքով պարոնին հետ. առաջինը քաջ զօրապետ մ՚էր, բայց երկաթի կամքով և անսանձ փառասիրութեամբ մէկը. իսկ երկրորդը կարգէ դուրս հանճարեղ, հնարագէտ և յանկուցիչ բնաւորութեամբ մարդ մ՚էր, բայց անխիղճ. ասոնց վախճանն էր ամէն զոհ ընել ու իրենց տիրոջը մոռին տիրել, զոր և յաջողցուցին։

Անհալդ՝ ամբարտաւանն ու վրէժխնդիր՝ չէր կրնար թագուհւոյն իր քրոջը աղջկան տեղ՝ թագաւորին հետ կարգուելուն ներել. ուստի Սոփիա–Ցորոթէայի Բրեդ. Գուլիէլմոսի հետ ամուսնանալէն եռքը սկսաւ աշխատիլ որ իրարմէ բաժնէ, և այլ և այլ կասկածներ տալով թագաւորին՝ շատ տագնապեցուց զթագուհին։ Բայց ասանկով միայն գոհ չըլլալով փառասիրութիւնը, քիչ ատենէն Կրէոմքովի հետ խնդրեց թագաւորէն որ անդրանիկ աղջիկը կնութեան տայ Շվէտդ կոմսին որ իրեն մօտ ազդականն էր և ժառանգ Բրուսիոյ թագին, թէ որ ինքը թագաւորը առանց մանչ զաւակ թողլու մեռնէր։ Բանն ալ ան էր որ պզտիկ Բրեդերիկոսի կազմուածքը շատ տկար ըլլալով՝ ապահով կը յուսացընէր զիրենք։ Թագաւորը չժխտեց խնդիրքնին՝ բայց որոշ բան մ՚ալ չզուրցեց, վասն զի իշխանուհին դեռ հազիւ ութ տարեկան կար. այլ Բրեդերիկոսի առողջութիւնը հետզհետէ հաստատուելով բոլորովին յոյսերնին կարեցաւ. բայց առանց վրհատելու Անհալդ և Կրէոմքով որոշեցին որ մէկ անգամով ամէն բան լմնցնեն։ Ժամանակէ 'ի վեր կատակերգուայ և չուանի վրայ պարողներու թէատրոն մը

բացուեր էր քաղքին մէջ. թագաւորը շատ ախորժելով ամէն անգամ տեսնելու կ'երթար։ Մնհալդ և Կրէոմքով իրենց ընելու սոսկալի եղեռնագործութեանը յարմար աս տեղն ընտրեցին. հոն կրակ ձգելով՝ թագաւորը որդւոցն հանդերձ կ'ուզէին խղդել, և մոքերնին դրեր էին որ երկուքը մէկէն տիրեն թագաւորութեան, Շվէտդի Իտալիա եղած ժամանակ։ Բայց բարեբաղդաբար Մանդանֆէլ կոմսը Բոլոնիոյ թագաւորէն Պերլին խաւրուած ըլլալով, տեսնուեցաւ Կրէոմքովի հետ որուն հետ շատ մտերիմ էր. երբոր դաւաճանութիւնը լսեց, սոսկալով՝ կնկանը Պլասբիլ խաթունին իմացուց որ թագուհւոյն սիրելին էր, ու ան ալ թագուհւոյն հաղորդեց, ազաչելով որ նոյն օրը ամէն ջանք ընէ որ թագաւորն ու որդին տեսարանի չերթան։

Ոճրագործութեան օրն հասաւ. թագուհին կէս մը պաղատելով՝ կէս մ'ալ կասկած տալով խափանեց թագաւորին տեսարան երթալը. վերջէն Գուլիէլմոս՝ Պլասբիլ խաթունէն ամէն բան տեղն'ի տեղ իմանալով՝ կանչել տուաւ զԿրէոմքով, որ արդէն ամէն բան յարմարցուցած ըլլալով վախնալու բան մը չունէր։ Ֆիքալ Քալ ցածագոյի զօրավարը կաշառեր էր՝ որ իրաւցնէ Կրէոմքովը պաշտպանելու արժանի մարդ էր. ասկէ դուրս դեռ շատ ուրիշ մարդիկ ալ կռնակ ունէր իրեն։ Համարձակութեամբ ուրեմն թագաւորին առջևն ելաւ, և երբոր լսեց իր վրայ եղած ամբաստանութիւնը, սկսաւ արդարացնել ինքզինքը. թագաւորը կանչեց նաև զՔալ՝ ինչպէս որ Կրէոմքով նախագուշակեր էր։ Քալ խորամանկութեամբ անանկ դարձուց դատը որ Պլասբիլ պարտաւոր սեպուեցաւ։

Բրեդերիկոս 16 տարեկան էր երբոր հայրը Լեհաստանի Օգոստոս Բ. թագաւորին այցելութեան երթալով՝ զինքն ալ շատ դժուարութեամբ մէկտեղ տարաւ 1728ին։ Երբոր հասան 'ի Սպասնիա, յանկարծ նոր աշխարհք մը բացուեցաւ պատանւոյն առոյգ և եռանդուն երևակայութեանն առջև. և իրաւցնէ Տրեզտայի և Պերլինի արքունեաց պէս անանկ իրարու հակառակ բան չէր կրնար ըլլալ։ Մէկուն մէջ խիստ թագաւոր մը և կառավարութեան կերպին նման լուրջ, միշտ զբաղեալ և սաստիկ խնայողութիւն սիրող մարդիկներ և ընտանեկան առաքինութեանց և ներքին կենաց պարապեալ կանայք. իսկ երկրորդը Գերմանիոյ և թերևս բոլոր Եւրոպայի ամենէն փառաւոր ու զուարճալի քաղաքն էր, և թագաւորն ինքնին ախտից ու թուլութեանց պաշտպանն էր, և ասիական շռայլութիւն տիրած էր չորս կողմը։

Ի՞նչ հակառակ բան եկաւ Բրեդերիկոսի հօրը չափազանց ագահութեանը քով այս տեսածները։ Պերլին ամէնուն միտքը մէկ բանի մը միայն զբաղած էր՝ այսինքն տէրութեան ծառայելու. իսկ ընդհակառակն 'ի Տրեզտա հազիւ թէ քանի մը ժամ ակամայ կառավարութեան բաներու վրայ կը մտածուէր. մընացած ժամանակը վայելից միայն կը ծախէին և ունեցած ստակնին զուարճութեանց կը գործածէին. հանդէս, ուրախութիւն՝ անպակաս էր, և հազար ու մէկ տեսակ զբօսանք։ Ասոնց հետ մէկտեղ թագաւորին ալ սիրելի կերպը զԲրեդերիկոս ևս առաւել արթնցուց։ Օգոստոս՝ խելացի, ասպետական ու ազնուական կերպովը զամէնքը կը զմայլեցնէր. կ'ուզէր որ ամէնքը իրեն նմանին. ուստի զԲրեդերիկոս—Գուլիէլմոսն ալ որդւոյն հանդերձ խղճահարութենէն փոխել ուզելով՝ մեծածախ կոչունքներ ըրաւ իրենց Մահճառստանի ամենէն զարմանալի դիներով։ Բրեդ. Գուլիէլմոս երբ դինիի դաւաթը ձեռքը տեսաւ՝ թուլցաւ. բայց ըմբռնելուն պէս թէ որդւոյն ալ նոյն դաբանը կը լարէ Օգոստոս՝ զայրացաւ և սպառնացաւ որ շուտ մը կ'ելլէ Տրեզտայէն։ Այսու հանդերձ Օգոստոս բաւական Բրեդերիկոսի աւրուելուն պատճառ եղաւ. և Տրեզտա երթալէն ետև, կ'ըսեն, Բրեդերիկոս ինքզինքը զուարճութեանց տուաւ՝ անանկ որ ինչուան

առողջութիւնն ալ ուրեց. բայց երբոր հասակին տաքութիւնն անցաւ, նուաճեց իր կիրքը. վասն զի այնպիսի անձ մը չէր կրնար երկայն ժամանակ գերի ըլլալ զգայարանացը։

Սաքսոնիա երթալը Բրեդերիկոսի վիճակին վրայ աւելի մոռդրութեան արժանի ազդեցութիւն մը ունեցաւ։ Տրեզտա այն ատեն Դերմանիոյ Ադինքն էր և իբրև սրբարան արուեստից, փիլիսոփայութեան և մատենագրութեան. հոն Բրեդերիկոս ալ աշխոյժ, թափանցող, ուսումնասէր և ազատ միտք մ'ունենալը յայտնի ըրաւ։ Իսկ հայրը տհաճելով նախ այսպէս յանկարծ Բրեդերիկոսի բացուելուն վրայ՝ ուզեց արգելք ըլլալ, բայց բոլորովին հակառակ արդիւնք ունեցան ըրած փորձերը։ Ան ատեն սկսաւ ամենայն խստութիւն բանեցնել վրան. ամէն ախորժին դէմ կը կենար, սիրտը կը վիրաւորէր, անգթութեամբ կը վարուէր հետը և ամենայն անիրաւութիւն կ'ընէր. այն ժամանակ իմացաւ Բրեդերիկոս թէ թագաւորի մը համար առաջին հարկաւոր բանն է արիութիւն հոգւոյ։

Երաժշտութեան սաստիկ սէր ձգած էր. բայց չըլլալով մէկը որուն հետ ներդաշնակութիւն ընէ, Բրեդերիկոս Բոցտամի ծանրագլուխ աղջկան մը հետ մէկտեղ կը նուագէր ազգականներուն առջև. այս որ իմացաւ հայրը՝ յանցաւոր սեպեց թէ զինքը և թէ իր ազգականները. բռնել տուաւ աղջիկը ու ցորեկ ատեն Բոցտամի փողոցներուն մէջ դահճի ձեռքով ծեծել տուաւ. աս եղածին վրայ սաստիկ վշտացաւ Բրեդերիկոս, որովհետև իր ոգւոյն բոլորովին դէմ բան էր. և վերջէն թագաւորութեան ժամանակ թոշակ կապեց խեղճին։

Ուսման սէրը որչափ որ հետզհետէ Բրեդերիկոսի սրտին մէջ կը շատնար՝ այնչափ աւելի առանձնութիւն կը սիրէր. վասն զի ինչ ազդեցութիւն կրնար ընել իր վրան ծիսապատ դահլիճ մը որ թագաւորին հանդատեան տեղն էր, և հոն քանի մը անուանի զօրավարաց ըրած անհամ ու անժուր խօսակցութիւնները. անոր համար ալ կը կնար ինքիրեն քաշուած ապրելու և հոը նախապաշարմունքներուն չհետեւելու։ Իր աղնիւ կերպը, յանդուգն կարծիքները, զարդարուիլ սիրելը և մանաւանդ ամէն բանէ վեր՝ արքունական նշանագրեստ հագնելու ունեցած ընդդիմութիւնը սաստիկ կը զայրացնէին զԳուլիէլմոս։ «Որդիս ուրիշ բան չէ, կ'ըսէր երբեմն բարկութեամբ, բայց եթէ պզտիկ տէր մը կամ խելացի գաղղիացի մը որ իմ ամէն աշխատութիւնս պիտի փճացնէ»։ Հետզհետէ աւելի խըստացուց իրեն հետ վարուելու կերպը, և ընդհակառակն ամենայն գութ խնամքը ցուցընէր երկրորդ որդւոյն վրայ, որուն անունն էր Օգոստոս–Գուլիէլմոս, և կ'ուզէր զանիկայ ժառանգ ընել գահոյն, բայց անկարելի եղաւ զԲրեդերիկոս հրաժարեցնելը. ուստի դեռ կատղելով՝ գերւոյ մը պէս սկսաւ վարուիլ հետը. կը ծեծէր չարաչար տանջելով տարուան հասակին մէջ, և անգամ մը ինչուան ձեռքովը ուզեց խղդել, կ'ըսեն։ Բրեդերիկոս հօրը բռնաւորութենէն խալըսելու համար այլ և այլ անգամ փորձեց փախչիլ արքունիքէն, բայց չկրցաւ. և այս փորձերուս մէջ իրեն գլխաւոր օգնականներէն մէկն էր Քադդ անունով անկեղծ բարեկամ մը։ Անգամ մ'ալ երբոր այսպէս փախչելու միտքն իմանալով՝ բռնեցին հօրը բերին զինքը, Գուլիէլմոս ինքիրմէ դուրս եղած՝ անէծքներով ու սպառնալիքներով ձեռքի գաւազանովը վրան յարձակեցաւ, մազերը փետեց ու արիւնլլայ ըրաւ թողուց։ Խեղճ Բրեդերիկոս յուսահատած կը պոռար թէ երբ այս աստիճան նախատուած է Պրանտէպուրկի կայսրընտիր մը։

Երբոր երկու օրէն վէճէլ հասաւ՝ բազմաթիւ պահպաններու ձեռք յանձնուեցաւ Բրեդերիկոս, և արգելուեցաւ որ և իցէ արտաքին մարդու հետ խօսակցելէ։ Երկրորդ օրը Գուլիէլմոս առջևը կանչել տուաւ զԲրեդերիկոս Մոզէլ զօրավարին ձեռքովը, և սպառնալից

ձայնով « ինչու համար ուզեցիր փախ-
չիլ, ըսաւ։ — Վասն զի ինչուան հիմա
հետս դերուոյ մը պէս վարուեցար, պա-
տասխանեց անարկիւղութեամբ Բրեդ։ —
Վատ դասալիք մ'ես. ոչ սիրտ ունիս,
ոչ պատիւ։ — Այնչափ ունիմ որչափ
հրամանքդ, պատասխանեց դարձեալ
Բրեդերիկոս. և ըրածս ինչ է՝ բայց ե-
թէ ինչ որ հրամանքդ ալ շատ անգամ
ըսեր ես թէ իմ տեղս ըլլայիր նէ կ'ը-
նէիր »։ Այս որ լսեց թագաւորը՝ աչքը
դարձաւ, սուրը հանեց, և թէ որ Մո-
զել մէջ մտնելով չարգիլէր՝ ո՛ գիտէ ինչ
կը հանդիպէր։ Այս դէպքէն ետև զո-
րավարաց աղանչանքովը համոզուեցաւ
որ ա՛լ ինքը չքննէ զԲրեդերիկոս, այլ եր-
կու զօրավարաց ձեռք յանձնեց իր պահ-
պանութիւնը, որոնցմէ 'ի ծածուկ քա-
նի մը անձանց հետ բարեկամանալով
գիշեր մը բանտէն պիտի փախչէր գե-
ղացիի զգեստով ու չուանով կախուե-
լով, բայց մօտակայ պահապան զինուո-
րին արթուն գտնուելովը արգիլուեցաւ։

Բրեդ. այսպէս արգելական տեղէ
տեղ փոխադրուեցաւ. քիչ ատենէն ու-
րիշ քանի մը ազնիւ մարդիկ ալ ազա-
տութիւն ունեցան հետը խօսելու. ա-
սոնց մէջ գլխաւորներէն մէկն է Լամոթ-
Ֆուդէ, որ եղբը Բրեդերիկոսի անուա-
նի զօրավարներէն և մանաւոր սիրելի
բարեկամներէն մէկն եղաւ։ Վրան շատ
չանցաւ դեռ աւելի ազատութիւն ունե-
ցաւ Բրեդ. և այս նամակս գրեց իր քը-
րոջը՝ զոր շատ կը սիրէր։

Սիրելի Քոյր իմ,

*Թագաւորական ժառանգութենէ պիտի զբ-
կեն զիս զինուորական ատենի ձեռքով, որ այս օ-
րերս պիտի բացուի. վասն զի հիմա հերետիկոսա-
պետ կը սեպուի ով որ ամէն բանի մէջ սիրտը
ուզածին պէս չարժիր։ Կրնաս ենթադրել թէ
ինչ աղուոր կերպով պիտի վարուին հետս. բայց
իմ ամենէն փոյթս չէ վրաս կարդացած նզովք-
նին, երբոր գիտնամ որ իմ սիրելի քոյրս անոնց
դէմ է։ Շատ ուրախ եմ որ վանդակներու և փա-
կանքներու ետևէ ալ պատուաւոր մարդկանց
ձեռքով այսպիսի ժամանակ մը, որ գրեթէ ամ-
նայն մարդիկ ապականեալ են, կրնամ իմ ու-
զածս քեզի գրել։ Սիրելի քոյր իմ, երբոր գիտ-
նամ թէ դուն երջանիկ ես, ինծի համար ալ բան-
սը երջանկութեան և ուրախութեան տեղ մը կ'
դառնայ։ Ով որ ծամանակ ունի՝ ինձի ասով մը-
խիթարուինք։ Բոլոր սրտովս կը փափաքիմ որ
միջնորդի կարօտ չըլլամ հետդ խօսելու համար.
այլ միաբան երջանիկ օրեր անցընենք՝ դու Իշխա-
նուդ և ես ալ Իշխանուհիովս անուշ ներդաշնակու-
թիւններ ընելով. կամ աւելի պարզ ըսելով՝ կը
փափաքիմ հետդ խօսելու ուրախութիւնն ունե-
նալ և ապահովցընել զքեզ որ աշխարհքիս վրայ
բնաւ բան մը վրադ ունեցած սէրս չկրնար պակ-
սեցնել — Մնաս բարով։*

Բրեդ.—Գուլիէլմոս՝ Բրեդերիկոսի հա-
ւասար կ'ատէր նաև իրեն այս քոյրը,
ինչպէս հետևեալ դէպքերէն ալ յայտ-
նի կ'ըլլայ։ Անգամ մը թագուհին Գու-
լիէլմոսի ոտքն ինկած կ'աղաչէր Բրեդե-
րիկոսի համար. նախ թագաւորը սրդո-
ղած մէկդի հրեց տղաքները և սարսա-
փեցուց զթագուհին « Տղաղ մեռած է »
ըսելով։ — Ի՞նչ, պոռաց խեղճ մայրը,
որդւոյդ դահիճը եղար։ — Ա՛լ իմ որդիս
չէր, այլ մահուան արժանի փախստա-
կան մը »։ — Մարեցաւ ինկաւ թագու-
հին. իսկ Գուլիէլմոս փոխանակ կակըղ-
նալու դեռ զայրացաւ. դուրս ելաւ ըզ-
քադդ բերելու համար որ վերջապէս
ձեռք ինկեր էր. և երբ նորէն դարձաւ՝
բռնեց զԲրեդերիկէ իշխանուհին՝ այս-
ինքն Բրեդերիկոսի սիրելի քոյրը, գե-
տին տապալեց, եւ թէ որ թագուհին
դէմ չդնէր՝ թերևս կը վիրաւորուէր.
նախատական խօսքերով թշնամանեց,
և սպառնացաւ թէ իրեն պատճառած
վշտերը գլխովը պիտի տուժէր։ — Արդ
ինչ էր արդեօք իշխանուհւոյն յանցան-
քը՝ բայց եթէ եղբօրը վրայ ունեցած
սաստիկ սէրը։ Այսպիսի սպառնալիք-
ներ թագուհւոյն ալ ընելէն ետև՝ կար-
գը եկաւ քադդին, և նախ գաւազանովը
զարկաւ ու գետին ձգեց. քադդ ամէն
հարցուցածին անվախութեամբ պա-
տասխան տուաւ։ Դարձեալ իշխանու-
հին ինքը կը պատմէ այս դէպքս ալ։ Ան-
գամ մը երբոր հայրս դրսէն դարձաւ ար-
քունիքն եկաւ, ամէնքնիս ընդ առաջ
գացինք ձեռքը պագնելու. բայց զիս
տեսնելուն պէս մէկէն կատաղութիւնը
երեսին վրայ ցայտեց, դէմքը սևցաւ,
աչքերը կրակի պէս կը վառէին և բե-

բանը կը փրփրար։ — «Անպիտան շանորդի, ըսաւ, դեռ կը համարձակիս առջևս երևնալ. գնա՛ քուկին նալելի եղբօրդ հետ ընկերութիւն ըրէ». այս ըսելով բռնեց դիս ձեռքովը ու սկսաւ բռնցի հարուածներ իջեցնել երեսիս, և մէկ մը անանկ ուժով զարկաւ որ մաղձնաց կռնակիս վրայ դեռին պիտի իյնայի թէ որ Ժոնոֆելտ խաթունը մաղերէս չբռնէր. անանկ կէս մարած վիճակի մէջ թմրած մնացի. բայց թագաւորը դեռ կատղած դիս ոտքին տակ կ'ուզէր առնել. բայց մայրս, եղբայրներս ու քոյրերս դէմ դրին. վերջապէս հազիւ երկար ժամանակէ ետև ինքզինքս զատայ»։

Շատերը կը կարծէին թէ Գուլիէլմոսի կատաղութիւնը առաջին բորբոքմանը կը հանդարտի, բայց անողոքելի բռնաւոր մը դարձած էր ու կ'ուզէր վրէժ առնուլ յորդոյն։ Ուրիշներուն համար միակ պատիժ որ և իցէ թեթև յանցանքի համար մահը կը սեպէր, բայց որդւոյն վրայ մոռնալով՝ այս կտորը կը տագնապեցընէր զինքը. վասն զի պաշտօնեայներն և ներքին խորհրդականները խմացուցեր էին խոհեմութեամբ թէ ինչ և իցէ ատեան իշխանութիւն չունէր զթագաժառանգը դատելու։ Վերջապէս միտքը դրաւ որ որդւոյն վրայ իբրև թագաժառանգ չմոռնայ՝ այլ իբրև գլուխիրանձնապահպանութեան։ Շատ դժուարութեամբ զինուորական ատեան մը կազմուեցաւ նորանոր անձինքներէ՝ վասն զի շատերը հրաժարեր էին. ասով Քադդ մահուան դատապարտուեցաւ, բայց Բրեդերիկոս անպարտ սեպուեցաւ։ Թագաւորը լսելուն պէս՝ մոլեգնոտած ոչնչացուց որոշմունքը. նոր ատեան մը կազմել տուաւ և վերջապէս ուրախացաւ որդւոյն դատապարտութիւնը լսելով։

Կը շարունակուի։

ՀՈՎԻՒ ԵՒ ԶԸԿՆՈՐՍ

Ի ժամ հիապանչ, քան զարշալոյսն իսկ պայծառ
Գոդ ծիծաղէր դեռ կիսալոյս օրն 'ի մայր.
Եւ քաղցրանինչ ընդ սաղարթուք մեղմ զեփիւռ
Վայրաբերեալ ընդ մռայլ ալիս ծածանիւր.
Յաշտարակէն զանգակն 'ի թինդ յամրագանգ
Զոր 'ի ձորոյ դանչէր զհեծմանցն յերկար վանդ.
Զերդ ընդ ալիս նուաղեալ բարբառ ցայգական
Նախ քան զգիշեր ձայնէ հանդիստ բընութեան։
Շինին մարդիկ զտաղտարոք սրիռեալ ցիր,
Զգեղջուկ մաղթանն երգեալ ըստ թինդան 'ի կըշիռ,
Գեղգեղելով արծարծէին զբոց հրատին,
Ըզցանցս ըզբնուքք կազմախեաց կախէին,